

Նոր տարին կենդանաբանական աշգուժ

Անդրեյ Ուսաչով

Նոր տարու՛ց քիչ առաջ կենդանաբանական աշգուժ տնօրեն Առյուծ Սիրամարգովիչ Մոծակյանի մոտ պատգամավորների մի խումբ եկավ: Ամենից առջևում ոգևի Վովկան էր, նրանից հետո՝ սիրամարգ Ֆեդոտ Ֆեդոտիչը, սպիտակ արջ Վասիլին, կոկորդիլոս Վիկտորը և վագր Կուզմա Եգորիչը... Մնացածի համար գրասենյակում տեղ չգտնվեց:



- Դե, ա՞յս անգամ ինչ է պատահել, - հարցրեց Առյուծ Սիրամարգովիչը:
- Մենք ցանկանում ենք տոնածառի հանդեսի գնալ, - ասաց ոգևի Վովկան:
- Ի՞նչ տոնածառ, - չհասկացավ տնօրենը:
- Ամանորյա, - հստակեցրեց արջ Վասիլին: - Խաղալիքներով զարդարված...
- Ինչի՞ համար:
- Որ նվերներ ստանանք, Ձմեռ պապին նայենք, մեզ ցույց տանք, - պոչը բացեց սիրամարգ Ֆեդոտ Ֆեդոտիչը:
- Ձեզ ցույց տա՞ք, - բացականչեց տնօրեն Մոծակյանը: - Բայց չէ՞ որ դուք բոլոր երեխաներին կվախեցնեք:
- Իսկ նրանք կմտածեն, որ մենք պարզապես դիմակներ ենք հագել՝ ամանորի դիմակահանդեսի դիմակներ, - չէր հանձնվում ոգևի Վովկան:
- Դե, իհարկե՛, - քմծիծաղեց տնօրենը: - Բոլորը կնայեն մեր Վիկտորին ու կմտածեն, որ դա այդպիսի երեք մետրանոց տղա է՝ կոկորդիլոսի

դիմակով... Իսկ եթե որևէ մեկի մայրիկի կամ տատիկի ուշքը գևա՞: Իսկ պատասխան ե՛ս պիտի տամ:

- Ճիշտ է ասում,- հոգոց հանեց վագր Կուզմա եգորիչը:
- Իհարկե, ճիշտ եմ ասում,- ասաց տնօրենը:- Գնացեք: Եվ այդ հիմարությունները գլխներիցդ դուրս շարտեք:

Կենդանիները վհատված լքեցին տնօրենի առանձնասենյակը:

- Հը, ի՞նչ արեցիք,- այս հարցով նրանց դիմավորեցին մյուս կենդանիները:
- Արգելեց,- քիթը քաշելով պատասխանեց ոգևի Վովկան:
- Ես այդդպես ել գիտեի,- ասաց պինգվին Աֆանասին: – Պետք էլ չէր հարցնել:

Պինգվին Աֆանասին իր վանդակում թաքցրել էր կարմիր սպորտային վերնազգեստ, սպորտային կոշիկներ և նույնիսկ փոմփոնով գլխարկ: Կենդանաբանական այգու պահակը խիստ կարճատես էր, այդ պատճառով պինգվինը, օգտվելով առիթից, իրեն դեռահասի տեղ դրած, առանց թույլատվության փախչում էր քաղաք՝ զբոսնելու:

- Քեզ ի՞նչ կա,- հառաչեց Գետածին:- Իսկ մեզ միանգամից կբռնացնեն:

Բուլորը տխրեցին:

- Իսկ ի՞նչ, եթե մենք կենդանաբանական այգում տոնածառի մեր հանդեսը կազմակերպենք,- վախվորած առաջարկեց ջայլամ Էմման:
- Հիանալի միտք է, աջակցեցին նրան մնացածը: – Չարդեր ու խաղալիքներ կգնենք...

Այցելուները հաճախ էին մանրադրամներ նետում կենդանիներին, որոնցով նրանք հետո պաղպաղակ, ծամոն կամ այլ մանրուքներ էին գնում, տարբեր մանր բաներ, որոնք Առյուծ Սիրամարգովիչը համարում էր վնասակար և օրաբաժնի մեջ դրանց տեղ չէր հատկացրել:

Բուլորը նետվեցին դեպի ազատավանդակներն ու լողավազանները, իրենց հոգեպահուստների հետևից: Մանրադրամի մի մեծ բուրգ հավաքվեց:

Քաղաք որոշեցին ուղարկել երեքին. ոգևի Վովկային, որն իր ասեղների պես գիտեր շրջապատի բուլոր խանութները, պինգվին Աֆանասին, որն ուներ մարդկային հագուստ, և կենգուրու Սինդիին: Սինդին հրաշալի

ցատկում էր և հեշտությամբ կարող էր ցատկել-անցնել կենդանաբանական այգու երեք մետրանոց ցանկապատի վրայով: Բացի այդ, նա շատ լավ տնտեսուհի էր և ամբողջ կենդանաբանական այգում միակն էր, որ ուներ սեփական պայուսակ:



Ամեն ինչ ընթանում էր նախատեսված ծրագրով:

Հաջորդ օրը ոգևի Վովկան հարտորեն անցավ պահակի կողքով: Անցյալ տարի նա ինքն էր անտառից եկել նրանց մոտ և կենդանաբանական այգու սեփականությունը չէր համարվում: Այդ պատճառով էլ պահակը մատների արանքով էր նայում Ոգևու զբոսանքներին:

Նրա հետևից, դպրոցականների ամբոխին խառնված, պահակի կողքով շորորալով անցավ Աֆանասին:

Իսկ Կենգուրուն, չնայած մանրադրամներով լիքը իր պայուսակին, հեշտությամբ թռավ այգու ցանկապատի վրայով:

Հանդիպելով նախապես պայմանավորված վայրում, եռյակն ուղևորվեց դեպի «Նվերներ» անունը կրող խանութը:



– Դուք ի՞նչ է, սրանք փողոցում եք հավաքել, - դժգոհ հարցրեց վաճառողուհին, երբ Կենգուրուն վաճառատղանին շուռ տվեց մանրադրամները:

– Ոչ, կենդանաբանական այգում, - ճշտեց պիկակին Աֆանասին: - Խնդրում եմ, տվեք մեզ հարյուր փուլչիկ, հարյուր շրիկան, այն շղթան, բենգալյան կրակներ...

– Իսկ մնացած փողին՝ գուհավոր թղթաժապավեն, - ավելացրեց ոգևի Վովկան: – Ամենալա՛վը:

– Գեղեցկություն, - հիանում էին կենդանիները, երբ Աֆանասին հատ-հատ հանում էր խաղալիքները պարկերի ու տոպրակների միջից:

– Այս շրիկանները շա՞տ ուժեղ են կրակում, - վախեցած հարցրեց ջայլամ Սիկին:

– Հետաքրքիր է, իսկ ինչո՞ւ են բենգալյան կրակները կոչվում բենգալյան, - վագր Կուզմա եգորիչին հանգիստ չէր տալիս վագրածի վերան:

- Ե՞ս որտեղից իմանամ:
- Բայց չէ՞ որ դու բենգալյան վագր ես:

Աղմուկի ու խառնաշփոթի մեջ միայն գետածի Սոտյան էր հանգիստ կանգնած:

- Իսկ տոնածառն ու՞ր է, - հարցրեց նա:



Բուլորը լռեցին: Պինգվին Աֆանասին նայեց կենգուրու Սինդիին, կենգուրուն նայեց ոզնի Վովկային, իսկ ոզնի Վովկան շփոթված մրթմրթաց.

- Տոնածառը մենք մոռացել ենք: Բայց հիմա կվազենք և...

Սինդին փորփրեց պայուսակն ու մոռացված մի մետաղադրամ գտավ:

- Ահա և ձեզ նոր տարի, - փքվեց սիրամարգ Ֆեդոտ Ֆեդոտիչը: - Գտա՛նք, թե ում ուղարկել...

Բուլորի տրամադրությունն ընկած էր:

- Իսկ միգուցե պահակի՞ց պարտքով վերցնենք, - առաջարկեց սպիտակ արջ Վասիլին: Պահակի կրպակի անկյունում փոքրիկ պլաստմասե տոնածառ կար դրված:

- Դա ոչ թե տոնածառ է, այլ պլաստմասե վարունգ, - քմծիծաղ տվեց մակակա Մարտինովը:

- Այո, - ասաց Կոկորդիլոսը: - Իսկ մեզ պետք է իսկական, մեծ ու

կանաչ տոնածա՛ռ:

– Մեծ ու կանա՞չ,- Ոգնին նայեց Կոկորդիլոսին:- Ահա այն՝ կենդանի, մեծ և կանաչ:

– Ո՞ւր է:

– Ես մտածեցի, եթե մեր Կիկտորին ինչպես հարկն է զարդարենք, ուրեմն մեր կենդանաբանական այգում կունենանք աշխարհի ամենակենդանի, ամենամեծ ու կանաչ տոնածառը:

– Ճիշտ է,- ասաց Աֆանասին: – Կկախենք քեզ վրա ծաղկաշղթա, խաղալիքներ, թղթաժապավեններ:

– Ինչ եք ասու՛մ,- վրդովվեց Կոկորդիլոսը:

Բայց միտքը բոլորին դուր եկավ: Իսկ ոմանք նույնիսկ նախանձեցին Կոկորդիլոսին:

– Ես էլ եմ կենդանի և նույնիսկ տեղ-տեղ էլ կանաչ եմ, բայց ափսոս, որ բավականաչափ մեծ չեմ,- ասաց սիրամարգ Ֆեդոտ Ֆեդոտիչը:

– Իսկ ես կենդանի եմ ու մեծ, բայց բավականաչափ նրբագեղ ու կանաչ չեմ,- հառաչեց գետածի Մոտյան:

Կոկորդիլոսը երկար չէր համաձայնվում:

Բայց և այնպես նրան համոզեցին:



Ամանորի նախօրեին տնօրեն Առյուծ Մոծակյանը բոլորին շնորհավորեց տոնի առթիվ, սրանց հանձնեց սվերների տուփերը, որտեղ կային մանդարիններ, բանաններ և հյուր: Նա բոլորին ուրախ տոն մաղթեց և գևաց տուև:

Իսկ կենդանիները սկսեցին պատրաստվել տոնակատարությանը: Տոնածառի համար տեղ ընտրեցին հրապարակում, շատրվանի կողքին: Ձմռանը շատրվանը չէր աշխատում, այդ պատճառով այնտեղ դարսեցին հյուրի շշերը, մանդարիններն ու բանանները: Իսկ հետո անցան գլխավորին՝ սկսեցին զարդարել կոկորդիլոսին:

Ոտքից գլուխ Կիկտորին փաթաթեցին ծաղկաշղթաներով ու թղթածապավեններով, և անցան խաղալիքներ կախելուև:

- Աջ ճյուղն ավելի բա՛րձր պահիր:
- Իսկ ծախը՝ քիչ ցա՛ծ:
- Միայն թե զգու՛յշ, որ խաղալիքները չկոտրես:

– Մեկ-երկու-երեք, դե, լույսեր, վառվե՛ք, – բացականչեցին բոլորը: Վովկան միացրեց լույսերը և կոկորդիլոսը շողաց գունավոր լույսերով:

– Ինչպիսի՞ գեղեցկութիւն, – հիացած բացականչեց ջայլամ Էմման: – Ինձ թվում է, մեր այգու տոնածառը քաղաքում ամենագեղեցիկն է:

– Աշխարհում, – նրան ուղղեց պինգվին Աֆանասին:

– Ափսո՛ւ, որ Ձմեռ պապ չկա, – հառաչեց Կուզմա Եգորիչը:

Ժամացույցն ազդարարեց տասներկուսը: Կենդանիները բացեցին հյութերը...

Եվ հանկարծ դարպասների մոտ մի որոտ հնչեց:

– Սա ի՞նչ է, հրավառութիւն, – հարցրեց ինչ-որ մեկը:

– Նման չէ, – պատասխանեց Մակակի Մարտինովը: – Ավելի շուտ մեր պահակի հեռուստացույցն ընկավ ցած:

Ընծուղտը երկարացրեց վիզը.

– Չէ, դա պահակը չէ, այդ Ձմեռ պապն է...

– Չի՞ կարող պատահել, – կենդանիները նետվեցին դեպի դարպասը:

Ընծուղտը չէր սխալվել: Իսկապես, փողոցում, կենդանաբանական այգու մուտքից ոչ հեռու կանգնած էր Ձմեռ պապի սահնակը: Ոգնի Վովկան խճկվեց ճաղերի արանքով ու վազեց դեպի սահնակը:

– Ողջույն, Ձմեռ պապ, Դուք մեզ մո՞տ եք եկել:

– Ես բոլորի մոտ եմ եկել, – պատասխանեց Ձմեռ պապը: – Բայց վախենում եմ էլ ոչ մեկի մոտ չհասցնել:

– Իսկ ի՞նչ է պատահել, – աղմկեցին կենդանիները:

Ձմեռ պապը պատմեց, որ իր սահնակն ինչ-որ մեքենայի հետ է բախվել: Լծափոկերը կտրվել են, իսկ վախեցած եղնիկները փախել են:

– Իսկ ես դեռ ինը փողոցի ու տասը նրբանցքի երեխաների նվերները չեմ հասցրել բաժանել, – տխուր հառաչեց նա:

– Պետք է օգնել Պապիկին, – վստահորեն ասաց վագր Կուզմա Եգորիչը:

Պահակը պինդ քնած էր: Պինգվին Աֆանասին մտավ պահակի կրպակը և աննկատ վերցրեց բանալիների կապը: Մեկ րոպե անց կենդանաբանական

այգու դարպասները բաց էին:

Ձմեռ պապի սահնակին լծվեցին վագրածի Վերան, ջայլամ Էմման և Պրժնալսկու ձիուկը:



– Մի՛ անհանգստացիր, Պապիկ, մենք քո նվերները կես ժամուկ տեղ կհասցնենք, – ասաց ոգևի Վովկան՝ մագլցելով սահնակը: Նրա հետ Ձմեռ Պապի սահնակ բարձրացան Կուզմա Եգորիչն ու արջ Վասիլին:

– Հե՛յ, ի՛նձ սպասեք, – բացականչեց Կոկորդիլոսը: Ծաղկաշղթայի մեջ խճճված, նա հագիվ էր գոլում քայլերը:

– Կանգ առ ու մի շարժվիր, – բացականչեցին մնացածները, – մենք շուտով կվերադառնա՛նք:

Սահնակը սլացավ դատարկ փողոցներով, իսկ նրա հետևից՝ կենդանաբանական այգու բնակիչները:



Եւ, ով քնած չէր ամանորի այդ գիշերը, արտասովոր ներկայացում տեսան. քաղաքի կենտրոնով, ձիով, վագրածիով ու ջայլամով լծված սահնակով ընթանում էր Ձմեռ Պապը: Սպիտակ արջն ու վագրը պարկից խաղալիքներն էին հանում, իսկ տասնյակ ամենատարբեր գազաններ այդ խաղալիքները բաժանում էին տներով և դնում էին դռների տակ:

Նրանց մոտ, ովքեր ապրում էին երկրորդ, երրորդ կամ չորրորդ հարկերում, ընծուղտի վզով ճարակորեն մագլցում էին կապիկները և նվերները թողնում էին պատշգամբներում ու լուսամուտագոգերին:



Իսկ նրանց մոտ, ովքեր ապրում էին ավելի բարձր հարկերում, ժապավեններով կապված նվերների տուփերը վեր էին հանում կարապները, թուրթակներն ու մարգարտահավերը:



Քաղաքապետն ինքն էլ տեսնավ, թե ինչպես մեծ աֆրիկյան փիղը կնճիթով, ինչպես բասկետբոլի զամբյուղի մեջ, պատշգամբներ էր նետում գնդակները:

Բայց որոշեց, որ դա երազում է տեսնում:

Մեկ ժամ անց բոլոր նվերները բաժանված էին հասցեներով և տոնական շքախումբը հետ սլացավ կենդանաբանական այգի:

Իսկ այդ ընթացքում կենդանաբանական այգում հետևյալն էր կատարվում: Այգու մոտով երկու խարդախներ էին անցնում: Տեսնելով բաց դարպասները, նրանք որոշեցին ներս մտնել. իսկ ի՞նչ, եթե հանկարծ հաջողվի ինչ-որ բան ձեռք գցել: Խարդախները մտան ներս ու տեսան տոնածառը:

- Տես, բարեկամս, – ասաց մեկը: – Ի՞նչ էլ լավ զարդարել են:
- Հիմա տոնածառի խաղալիքները թանկ արժեն, – գլխով արեց մյուսը:

Եվ նրանք վճռականորեն մոտեցան տոնածառին:

Կոկորդիլոսը, ընկերներին սպասելով, փոքր-ինչ ննջել էր: Բայց, լսելով կասկածելի շշուկները, նա բացեց մի աչքը:

- Դու աջ կողմի խաղալիքները հանիր, – լսեց նա, – իսկ ես՝ ձախինը:

Երբ խարդախները ձգվեցին դեպի խաղալիքները, տոնածառը հանկարծ բացեց իր մեծ երախն ու դեպի նրանց ձգեց երկու կանաչ թաթերի ճակերը...

Վայրի ճիչերով գողերը սկսեցին փախչել, ասես երկու կենդուրու, թռան ցանկապատի վրայով և անհետացան:

Իսկ մեկ րոպե անց Ձմեռ պապիկի սահնակը մոտեցավ այգու դարպասներին:

- Սիրելի Ձմեռ պապիկ, – ասաց ովևի Վովկան: – Եթե դու մի փոքր ժամանակ ունես, մենք ցանկանում ենք քեզ հրավիրել մեր տոնածառի մոտ:
- Մեծ հաճույքով, – պատասխանեց նա: Տեսնելով զարդարված Կոկորդիլոսին, Ձմեռ պապը հիացավ.
- Երբե՛ք այսպիսի հիանալի տոնածառ չէի տեսել:



Պապի մոտ դեռ մի ամբողջ պարկ նվերներ էին մնացել. ընծուղտ Ֆիլիմոնին մի երկար ու գեղեցիկ շարֆ հասավ, փիղ ամուսիններին՝ բրդյա կոշիկներ ու ձեռնոցներ՝ կնճիթի համար, գետածի Սոտյային՝ էլեկտրական առամաքրիչ, ջայլամ Էմմային՝ հայելի, ոզնի Վովկային՝ էլեկտրական լուսարձակ:



Հերիքեց բոլորին:

– Իսկ ի՞նձ, - հարցրեց կոկորդիլոս Վիկտորը:

Ձմեռ Պապը նայեց պարկի մեջ. նվերներ այլևս չկային: Այդ ժամանակ նա ձեռքից հանեց իր ժամացույցը և մեկնեց կոկորդիլոսին.

- Վերցրու, սա անվանական է, ջրակայուն:
- Հիանալի է, - ուրախացավ Վիկտորը: - Այժմ ես ճաշից չեմ ուշանա:



Իսկ հետո կենդանիները շուրջապարեր բռնեցին, խմեցին հյուսիս և երգեցին ամանորի երգեր: Տոնը շարունակվեց այնքան, մինչև ընծուղտ Ֆիլիմոնը ցանկապատից այն կողմ նկատեց կորած եղնիկներին:

Ձմեռ պապը լծեց սահնակը, հրաժեշտ տվեց բուլորին և խոստացավ հաջորդ տարի անպայման այցելել կենդանաբանական այգի:

Արդեն առավոտ էր: Կենդանիները կերան մնացած մանդարիններն ու ցրվեցին իրենց վանդակներով: Միայն կոկորդիլոս Վիկտորն էր, որ տոնածառի գարդերի մնացորդները վրան թափառում էր այգում և մտածում. արդյո՞ք հաջորդ տարի իրեն տոնածառ կընտրեն, թ՞ե ոչ...

Նկարները՝ Անահիտ Գարդյանի
Թարգմանություններ՝ Վերոնիկա Բուռնուչյանի
Խմբագիր՝ Սամվել Առաքելյան